ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕХЕГНУТИ ГЮХАПЕТАРАН

գ. Եղեգնուտ հեռ. (0237) 6-90-94 093 18 76 56

Թիվ _ - 105

« 01 » Օգոստոսի 2013 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Եղեգնուտի գյուղապետարանը ներկայացնում է հուլիս ամսին Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի թիվ 10-Ա, 11-Ա որոշումները և թիվ 07-Ա, 08-Ա և 09-Ա կարգադրությունները՝ համաձայն հավելվածների:

Առդիր 5 թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

7381-13
12 08 2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 – 76 – 56

ՈՐՈՇՈՒՄ

26 հուլիսի 2013թ. ԹԻՎ 11 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՂԵԳՆՈՒՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52 հոդվածով *որոշում եմ՝*

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի «Եղեգնուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2.Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
3.Կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի «Եղեգնուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն օգտագործման իրավունքով ամրացվող, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմն ու արժեքը, համաձայն սույն որոշման կից հավելված 1--ի:
5.ՀայաստանիՀանրապետության քաղաքացի Լեյլի Մարտիրոսյանը՝(անձնագիր՝AN0221013,տրված 31.07.2012թվականին 048 կողմից, հասցե՝Արմավիրի մարզ, գյուղ՝ Եղեգնուտ, 6-րդ փողոց,16 տնակ) սույն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի «Եղեգնուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ավագանու կողմից հաստատվելուց լիազորվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի «Եղեգնուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին ներկայացնել գրանցման՝ Հայաստանի Հանրապետության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստր:
6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար՝ Սեդրակ Ալեքսանյանին:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վավերացման պահից:

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ

26.հուլիսի 2013թ.
գ. Եղեգնուտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 – 76 – 56

ՈՐՈՇՈՒՄ

02 հուլիսի 2013 թվականի 10-Ա

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ_ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱԴՐ ՔԱԼԱՇԻ ԱՄՈՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի բնակիչ՝ Բադր Քալաշի Ամոյանը դիմել է Եղեգնուտի համայնքի 9 Փ. 89 տուն հասցեում գտնվող 1300 քմ օրինական տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված բնակելի տունը և շենք-շինությունները օրինականացնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թվականը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1.2.3. ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Կառավարության 18.05.2006 թ-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով **ո ր ո շ ո ւ մ ե մ՝**

1. Վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի 9 Փ. 89 տուն հասցեում գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ քաղաքացիներ՝ Բադր Քալաշի Ամոյանի ծնված՝ 15.06.0961-ին գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց համասեփականության իրավունքը 1300 ք.մ օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան 94.3 ք.մ կառուցված՝ 1984թվականին, ծածկ 43.9ք.մ, պահեստ 10.2 քմ կառուցված՝1984 թվականին, թոնրատուն 16.0 քմ կառուցված 1984թ. և անասնաշենք 30.2 քմ կառուցված 1984թ:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:
3. Շենք-շինությունների մակերեսը ենթակա է ճշտման ՀՀ ԿԱԳԿՊԿ –ի համապատասխան ստորաբաժանման կողմից:
4. Առաջարկել ՀՀ ԿԱԳԿՊԿ –ի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ՝ Բադր Քալաշի Ամոյանի համա- սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետերում նշված բնակելի տան և շենք- շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 – 76 - 56

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« 29» հուլիսի 2013թ N 09-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՂԵԳՆՈՒՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածով *կարգադրում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի «Եղեգնուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվապահի լիազորությունները ժամանակավոր վերապահել Վերմիկ Հրանտի Սիմոնյանին `(անձնագիր՝ AE 0349797, տրված `25 .06. 1999 թվականին 048-ի կողմից, հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ՝ Եղեգնուտ,5-րդփողոց,52տուն)
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 – 76 - 56

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

« 29» հուլիսի 2013թ N 08-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՂԵԳՆՈՒՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84 և 95 հոդվածներով և « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածով *կարգադրում եմ՝*

1. Լեյլի Մարտիրոսյանին՝(անձնագիր՝AN 0221013, տրված՝31.07.2012 թվականին 048-ի կողմից, հասցե՝ Արմավիրի մարզ, գյուղ՝ Եղեգնուտ, 6-րդ փողոց, 16 տնակ) նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի «Եղեգնուտի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր օրենքով սահմանված կարգով:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնք
Հեռ. (093) 18 – 76 - 56

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

01. հուլիսի 2013թ N 07-Ա

ՌՈՄԱՆ ՍՏՅՈՊԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային Օրենսգրքի» 158 հոդվածի 1 – ին կետով, հիմք ընդունելով ժամանակացույցը և իր դիմումը, *կարգադրում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ռոման Ստյոպայի Կարապետյանին տրամադրել ամենամյա վճարովի արձակուրդ, համաձայն՝ ժամանակացույցի:
2. Համայնքի ղեկավարի տեղակալի բացակայության ժամանակ պարտականությունները վերապահել համայնքի ղեկավարի օգնական՝ Սոնա Սաղաքյանին:
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ